ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

**Երեւան, 23 ապրիլի, 1998թ.**

**Համագումարի հարգելի մասնակիցներ,**

Ողջունում եմ Ձեզ հայ ոսկերիչների եւ ադամանդագործների հիմնադիր համագումարի աշխատանքներն սկսելու կապակցությամբ եւ ցանկանում արդյունավետ աշխատանք:

Հուսով եմ, որ համագումարը հնարավորություն կստեղծի միավորելու աշխարհով մեկ սփռված հայ գործարարներին, մասնագետներին եւ արհեստավորներին, համախմբելու նրանց ուժը, կարողություններն ու փորձը եւ կամրապնդի հայ ոսկերիչների՝ աշխարհում ձեռք բերած դիրքերը:

Այս իրադարձությունը նոր իմաստ կհաղորդի հայ ոսկերչության դարավոր պատմությանը եւ կնպաստի Հայաստանի՝ որպես ոսկերչության միջազգային կենտրոններից մեկի ձեւավորմանը:

Անվիճելի է, որ այսօր միայն տնտեսապես զարգացած եւ հզոր Հայաստանն ու սփյուռքն են ի վիճակի համարժեք լուծելու մեր ժողովրդի առջեւ ծառացած բազմաբնույթ խնդիրները: Մեր կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ներդրումների համար բարենպաստ նախադրյալների եւ պայմանների ստեղծմանը, որը հնարավորություն կստեղծի հայրենական արտադրության զարգացման, մանր եւ միջին գործարարության ընդլայնման, արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման եւ աշխատատեղերի շարունակական ավելացման համար:

Երեւանյան մեր հանդիպումից արդեն անցել է կես տարուց քիչ ավելի, եւ այսօր մենք հնարավորություն ունենք փոխադարձ հաշվետվություն ներկայացնել մեր խոստումների վերաբերյալ: Ինչպես հայտնի է Ձեզ, եւ ինչպես խոստացել էի համագումարի նախապատրաստական խմբի հետ հանդիպման ժամանակ, նվազեցվել են սոցիալական ապահովագրության վճարները, շահութահարկի դրույքաչափերը, բարենպաստ պայմաններ են ստեղծվել ոլորտի զարգացման համար: Արդյունքում արդեն հիմնադրվել են մի շարք ձեռնարկություններ, որոնց ստեղծողներն այսօր Ձեր շարքերում են:

Համոզված եմ, որ ճյուղի բոլոր ձեռնարկությունները զգացել են Հայաստանի իշխանությունների եւ հատկապես կառավարության կայուն աջակցությունն ու օժանդակությունը: Ինչ վերաբերում է Ոսկերչական տարածաշրջանային կենտրոնին շենք տրամադրելուն, ապա այստեղ եւս խոսքը Ձերն է: Կառավարությունն արդեն իսկ հատկացրել է Երեւանի լավագույն շենքերից մեկը, որը, հուսով եմ, շուտով կլցվի կյանքով եւ նոր թափ կհաղորդի ոլորտի զարգացմանն ու հայ գործարար կապերի ամրապնդմանը:

Մեկ անգամ եւս ողջունում եմ Ձեզ, ցանկանում ամենայն բարիք, արդյունավետ գործունեություն՝ ի շահ եւ ի բարօրություն Հայոց աշխարհի:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ